

Մշակվել է Երիտասարդական ուսումնասիրությունների Ինստիտուտի (ԵՈՒԻ) կողմից՝ «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության գնահատման և մոնիթորինգի» արդյունքների հիման վրա:



Համառոտագիրն ուղղված է մատնանշելու հետազոտության արդյունքում երիտասարդների, փորձագետների կողմից մատնանշված, ինչպես նաև տարբեր ոլորտային հետազոտություններում նշված կարիքները՝ ինչպես երիտասարդության, այնպես էլ երիտասարդական ոլորտի: Հարկ է նշել, որ համառոտագրում ներկայացվում են միայն ընդհանուր կարիքները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթակարիքները: Կարիքների մասին առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված կլինի «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության գնահատման և մոնիթորինգի» հաշվետվության մեջ:

Ի՞նչ կարիքներ ունեն այսօր ՀՀ երիտասարդները

Փորձագետները նշում են երիտասարդների շրջանում մասնակցության ցածր մակարդակի մասին: Ռազմավարության միջոցառումների ցանկում առավել ծավալուն մաս են կազմում երիտասարդների մասնակցության խթանմանն ուղղված գործողությունները, ներառելով նաև երիտասարդական կազմակերպությունների զարգացման միջոցառումներ: Տարբեր հետազոտություններում և հարցազրույցների ու ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում ևս հաճախ է նշվում երիտասարդների մասնակցության կարևորության ու տարբեր բաղադրիչների մասին: Մասնավորապես կարևորվել է երիտասարդների մասնակցությունը քաղաքական և քաղաքացիական կյանքում, որոշումների ընդունման գործընթացում, խոցելի խմբերի ներառումն ու մասնակցությունը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացումը, երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խթանումը: Սրանք այն խնդիրներին են, որոնք նշվել են տարբեր հետազոտություններում, հարցազրույցների ու ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում:



Թեպետ *ԵՄԻԿ ՊՈՍԿ-ի կողմից ֆինանսավորված 2013-2016թթ. դրամաշնորհային ծրագրերի մեծ մասը (55.2%, թվով 101 ծրագիր) ուղղված է եղել քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանմանը*, այնուամենայնիվ ոլորտում դեռ շատ անելիք կա, մասնավորապես հաշվի առնելով, որ հազվադեպ ծրագրեր են ներգրավել գյուղական երիտասարդությանը, իսկ իրականացված ծրագրերում մասնակցային մեթոդաբանությունը գրեթե բացակայում է:

Երիտասարդների կրթության ու զբաղվածության հարցերը շարունակում են արդիական մնալ: Թե հարցազրույցների ընթացքում, թե վերլուծությունների մեջ ընդգծվում է, որ զբաղվածության խնդիրները սերտորեն կապված են մասնագիտական կրթության հետ: Հարկ է նշել, որ կրթության ու զբաղվածության հիմնախնդիրները առավել մեծ գերակայություն են համարվել ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների կողմից: Երիտասարդները մասնավորապես անդրադարձել են կրթության որակին ու մատչելիությանը, կրթության ու աշխատաշուկայի կապին, իրենց համայնքում աշխատանք ունենալու կարևորությանը, այսօրվա երիտասարդի՝ ինքնուրույն կյանք վարելու սոցիալ-տնտեսական խնդիրներին:

Երիտասարդների սոցիալ տնտեսական խնդիրների և զբաղվածության հարցերի լուծմանն ուղղված եղել է դրամաշնորհային ծրագրերի 13%-ը, կրթության շարունակականության և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությանը՝ շուրջ 17%-ը:

Ըստ փորձագետների, ոչ ֆորմալ կրթության ոլորտում վերջին տարիներին բավականին շատ աշխատանք է իրականացվել, թեև այս ոլորտում էլ դեռևս չլուծված հարցեր են մնացել: Մասնավորապես, երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների վերաբերյալ զեկույցում առաջարկվում է ներդնել ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչելիության համակարգ, որպեսզի գործատուների համար ոչ ֆորմալ կրթության միջոցով ստացած գիտելիքները և հմտությունները համարվեն նվազագույն պահանջներին համապատասխանող: Փորձագետների կողմից ընդգծվում է նաև ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգի փոխկապակցման կարիքը: Երիտասարդները ևս կարևորում են ոչ ֆորմալ կրթությունը և առաջարկում այն ներդնել՝ սկսած դպրոցից:

Վաղվա հիմնական աշխատուժը չի հետևում իր առողջությանն արդեն այսօր: Երիտասարդության վերաբերյալ հետազոտությունները և տվյալ հետազոտության մասնակիցները անդրադառնում են առողջության ու առողջ ապրելակերպի հետ կապված կարիքներին՝ այս ոլորտում մատնանշելով մի շարք խնդիրներ: Շատ կարևոր է գիտակցել, որ երիտասարդները հոգ չեն տանում իրենց առողջությանը. մի կողմից երիտասարդների շրջանում թույլ է զարգացած առողջ ապրելակերպի մշակույթը, մյուս կողմից շատ համայնքներում բացակայում են մարզական ենթակառուցվածքները, բժշկական հաստատությունները:

Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված է եղել դրամաշնորհային ծրագրերի մոտ 12%-ը միայն:



Երիտասարդների կյանքում ժամանցը նույնպես մեծապես կարևորվում է: Այս ոլորտներում առկա կարիքները քիչ են արտացոլված ուսումնասիրված հետազոտություններում, ըստ էության, մյուս կարիքների նկատմամբ դրանց երկրորդական տեղ է հատկացված: Միաժամանակ, հոգևոր-մշակութային միջոցառումները կարևորվել են երիտասարդների ժամանցի համատեքստում, որը հատկապես գյուղական համայնքների երիտասարդների համար արդիական կարիք է: Այս կարիքների ներքո երիտասարդների և ոլորտի ներկայացուցիչների կողմից մասնավորապես կարևորվում է համայնքում մշակութային հաստատությունների և միջոցառումների առկայությունը, ժամանցի կազմակերպումը, ինչպես նաև երիտասարդների մոտ առկա ազգային արժեքային համակարգի առկայությունը:

Երիտասարդների հոգևոր - մշակութային արժեքների զարգացմանը և ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը ուղղված է եղել ընդհանուր ծրագրերի 33%-ը: Իհարկե, թվում է, թե 33%-ը բավականին լուրջ թիվ է, սակայն հարկ է հաշվի առնել, որ գյուղաբնակ երիտասարդությունը հիմնականում ներգրավված չէ իրականացվող միջոցառումներում:

Այլ կարիքներ: Բացի թվարկված ոլորտներից, որոնք պայմանականորեն խմբավորվեցին 2013-2017թթ. ռազմավարության գերակայությունների շարքում, հետազոտության ընթացքում բացահայտվել են մի շարք այլ կարիքներ: Դրանցից մի քանիսը արտացոլված են 2015-2025թթ. երիտասարդական քաղաքականության հայեցակարգի գերակայություններում՝ ինչպես օրինակ երիտասարդական ընտանիքի աջակցությունը, շարժունակության խրախուսումը, երիտասարդական աշխատողի գաղափարը: Ընթացիկ ռազմավարության և հայեցակարգի մեջ սակավ ընդգրկված է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը: Մեծապես կարևորվել են նաև երիտասարդների կարիքներն այնպիսի հարցերի շուրջ, ինչպես օրինակ՝ շարժունակությունը, երիտասարդ ընտանիքներին անհրաժեշտ աջակցությունը, երիտասարդական աշխատողի ինստիտուտի զարգացման անհրաժեշտությունը, գաղափարների իրագործման կենտրոնի ստեղծումը, ոլորտի առանցքային կառույցների քարտեզագրում, խոցելի խմբերի ներառումն ու խտրականության բացառումը:

Ամփոփում: Մասնակցության ոլորտի ներկայացված խնդիրներից կարելի է եզրակացնել, որ այս ոլորտում դեռևս անելիքները շատ են, և հետագա ռազմավարության մեջ բացի իրազեկման, համայնքային մակարդակում մասնակցության բարելավմանն ու գենդերային հավասարությանն ուղղված միջոցառումներից (որոնք առկա են ընթացիկ ռազմավարության մեջ), հատուկ ուշադրություն դարձնել խոցելի խմբերի ներառմանը, երիտասարդների ինքնարտահայտման ու ինքնակազմակերպման խթանմանը, կամավորության ինստիտուտի զարգացմանը, ինչպես նաև գործող հարթակների աշխատանքի արդյունավետության ու ներառականության բարելավմանը:



Ներկա Ռազմավարությունն ընդգրկում է առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված մի շարք միջոցառումներ՝ ներառյալ զանգվածային միջոցառումների կազմակերպում, իրազեկում, մրցույթների և քարոզարշավների կազմակերպում: Այնուամենայնիվ, բաց է մարզական ենթակառուցվածքների ապահովման մասը:

Մշակութային ոլորտի կարիքները կապված են մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության հնարավորությունների սահմանափակության, առհասարակ ժամանցի կազմակերպման հետ. այս կարիքները կարելի է ներառել նաև երիտասարդների մասնակցության ոլորտում: Ինչ վերաբերում է հոգևոր արժեքներին, փորձագետները կարևորում են հանդուրժողականության, քաղաքացիական պատասխանատվության ու ազգային ինքնաճանաչողության արժեքների զարգացումը, կարծրատիպերից ու պահպանողական մտածելակերպից ազատումը:

Սույն համառոտագիրը մշակվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարության աջակցությամբ իրականացված «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության գնահատման և մոնիթորինգի» շրջանակներում կատարված ուսումնասիրության հիման վրա, որը շուտով հասանելի կլինի www.ystudies.am կայքում:

